# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**<< 30 >> ապրիլի 2013թվականի N 51 -Ա**

## ՄԱՅԻՍՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետով և հիմք ընդունելով Գյումրու զինկոմիսարիատի ներկայացրած ցուցակները՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Մայիսյան տոների կապակցությամբ արցախյան պատերազմում (1991-1994թթ.) զոհված ազատամարտիկների ընտանիքներին, զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքներին, արցախյան պատերազմի 1-ին, 2-րդ, 3-րդ կարգի հաշմանդամ ազատամարտիկներին, Գյումրի քաղաքից Հայրենական Մեծ պատերազմին մասնակից վետերաններին, 1956թվականի հոկտեմբերին Հունգարիայի հեղաշրջման ճնշմանը մասնակից վետերաններին Գյումրի համայնքի բյուջեի այլ ծախսերից տրամադրել դրամական օգնություն:

2. Հանձնարարել քաղաքապետարանի աշխատակազմի ֆինան-սատնտեսագիտական բաժնի պետ Լ.Ջիլավյանին՝ կատարել համապատասխան վճարումները Գյումրի համայնքի 2013թվականի բյուջեով նախատեսված 10/7/1 գործառնական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> 4729 տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ 6000,0 հազար (վեց միլիոն) ՀՀ դրամ՝ հաջորդ ավագանու նիստին ներկայացնելով վճարված ցուցակները և փաստացի վճարված գումարի չափը:

**Կողմ (14)** **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

**Ա.Ադամյան**_____

**Ա.Բաղրամյան**_____

**Լ.Բարսեղյան** _____

**Մ.Գաբոյան**_____

**Ա.Գրիգորյան** _____

**Վ.Եդիգարյան** _____

**Գ.Թաթարյան** _____

**Հ.Խաչատրյան** _____

Տ.Հովհաննիսյան _____

Վ.Հունանյան _____

Ռ.Մխիթարյան _____

Ե.Պողոսյան _____

Մ.Սահակյան _____

Ա.Վարդանյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ